

ՇԻՐԱԿԻ ԱՋԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ ԱՎ. ԻՄԱՀԱԿՅԱՆԻ
«ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊՈՒՄ

Կարինե Ռ. Բազեյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Անվտոմում

Նախաբան. Ազգագրական գիտության գրավոր աղբյուրների շարքում իր ունեցած տեղով ու դերով առանձնանում է գեղարվեստական գրականությունը, որը վաղուց դարձել է տարբեր երկրների ազգագրագետների ուսումնասիրության առարկան: Ազգաբանության համար մեծ նշանակություն ունի հատկապես կենցաղամշակութային այն ֆոնը, որտեղ կատարվում են իրադարձությունները, կերպարներին շրջապատող կենսոլորտը, բնական ու մշակութային միջավայրը: Սովորաբար այն վերարտադրվում է մեծ հավաստիությամբ և դրան նպաստում է այն հանգամանքը, որ տաղանդավոր արվեստագետը ավելի դիտողունակ է, ավելի շատ նրբություններ է նկատում, քան շարքային դիտորդը: Մեթոդներ և նյութեր. Ավ. Իսահակյանի «Ուստա Կարո» վեպի աղբյուրագիտական վերլուծությունն իրականացվել է ինչպես ազգագրական, այնպես էլ կոնկրետ իրողություններին վերաբերող մասնագիտական գրականության քննական – համեմատական մեթոդով: Հիմնվելով համատեքստային հետազոտության և գոյություն ունեցող տեսությունների վրա՝ փորձ է կատարվել արժևորելու մեծ վարպետի արձակ ստեղծագործություններում առկա այն հարուստ ազգագրական նյութը, որը ներկայացնում է Շիրակի ավանդական կենցաղամշակութային համալիրն իր բազում դրսևորումներով: Վերլուծություն. Քննության առնված ստեղծագործությունների ուսումնասիրության արդյունքում ներկայացվում են շիրակցիների էթնիկ մշակույթի այն բնագավառներն ու երևույթները, դրանց այն կոնկրետ դրսևորումները, որոնց վերաբերյալ ազգագրական նյութերը կա՛մ բացակայում են կա՛մ շատ թերի են արձանագրված: Արդյունքներ. Հետազոտության արդյունքում լուսաբանվել են Շիրակի բնակչության առաջնային ար-

տաղրության մաս կազմող գյուղական արհեստներն ու հոգևոր մշակույթը ներկայացնող Մբ Գևորգի տոնը:

Բանալի բառեր՝ Շիրակ, ազգագրություն, Բասհակյան, ավանդական մշակույթ, արհեստ, Մբ Գևորգի տոն:

Ինչպես հղել՝ Բազեյան Կ., Շիրակի ազգագրական համայնապատկերը Ավ. Բասհակյանի «Ուստա Կարո» վեպում: // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1(26): 19-29 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-19

THE ETHNOGRAPHIC OVERVIEW OF SHIRAK IN AV. ISAHAKYAN'S NOVEL "USTA KARO"

Karine R. Bazeyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Abstract

Introduction: Among the written sources of ethnology, fiction is distinguished by its place and role, which has long been the subject of study by ethnographers of different countries, because it reproduces the life, lifestyle, and biophilosophies of the people with great reliability. From this point of view Av. Isahakyan's literary heritage is of great interest, the analysis of which the article is devoted to. **Methods and materials:** The source analysis of Av. Isahakyan's works was carried out by using the examinational-comparative method of both ethnographic and professional literature related to concrete realities. Based on contextual research and existing theories, an attempt was made to evaluate the rich ethnographic material in the prose of the master, which represents the traditional household and cultural complex of Shirak in its lots of manifestations. **Analysis:** The article presents the manifestations of the traditional culture of Shirak population, regarding the ethnographic materials are either absent or very incompletely recorded. **Results:** As a result of the research, by subjecting Isahakyan's prose for the first time to a source-based analysis, the author has used many values of the traditional culture of the Shirak inhabitants into scientific circulation.

Key words: Shirak, ethnography, Isahakyan, "Usta Karo", traditional culture, craft, St Gevorg Feast.

Citation: Bazeyan K. *The Ethnographic Overview of Shirak in Av. Isahakyan's Novel "Usta Karo"* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1 (26). 19-29pp..

DOI:10.52971/18294316-2023.26.1-19

ЭТНОГРАФИЧЕСКИЕ ЗАРИСОВКИ ШИРАКА В РОМАНЕ АВ. ИСААКЯНА "УСТА КАРО"

Карине Р. Базеян

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

Аннотация

Предисловие: Среди письменных источников этнологии особое место занимает и важной ролью выделяется художественная литература, которая издавна является предметом изуче-

ния этнографов разных стран, поскольку она с большой достоверностью воспроизводит быт, образ жизни, психологос (жизненная философия) народа. С этой точки зрения большой интерес представляет литературное наследие Ав. Исаакяна, анализу которого посвящена статья. *Методы и материалы:* Источниковедческий анализ произведений Исаакяна осуществлялся с использованием критико-сопоставительного метода как этнографической, так и специальной литературы, связанной с конкретными реалиями. Опираясь на контекстуальные исследования и существующие теории, сделана попытка оценить богатый этнографический материал в прозе Исаакяна, представляющий традиционный бытовой и культурный комплекс Ширака во многих его проявлениях. *Анализ:* В статье представлены те проявления традиционной культуры ширакцев, относительно которых этнографические материалы либо отсутствуют, либо зафиксированы в неполном объеме. *Результаты:* В результате исследования, впервые подвергнув прозу Исаакяна источниковедческому анализу, автор ввел в научный оборот многочисленные ценности традиционной культуры ширакцев.

Ключевые слова: *Ширак, этнография, Исаакян, «Уста Каро», традиционная культура, ремесло, праздник св. Геворга.*

Как цитировать: Базеян К. *Этнографические зарисовки Ширака в романе Ав. Исаакяна "Уста Каро"* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1(26). 19-29 сс..

DOI: 10.52971/18294316-2023.26.1-19

ՆԱԽԱԲԱՆ. Իր յուրահատկությունների շնորհիվ գեղարվեստական գրականությունը, համեմատած գրավոր աղբյուրների այլ տեսակների հետ, ձեռք է բերում մի շարք առավելություններ: Յուրաքանչյուր կոնկրետ ստեղծագործության համեմատական արժեքը ազգագրության համար որոշվում է նրա ոճական ու ժանրային առանձնահատկություններով, թեմատիկայով, հեղինակի իրազեկության աստիճանով և այլն: Այս տեսակետից հատկապես արժեքավոր է ռեալիստական գրականությունը: Ռեալիստ գրողները ձգտում են տալ կյանքի, երևույթների, մարդկանց ու իրերի առավել ամբողջական ու ճշմարտացի պատկերը, դրանք ներկայացնելով այնպիսին, ինչպիսին են իրականում: Գեղարվեստական գրականությունը որպես սկզբնաղբյուր ընդունելով, դրանց հեղինակները դիտվում են որպես ականատեսներ, յուրատեսակ բանասացներ և խիստ գնահատելի են ազգագրագետների կողմից:

Ազգագրագետի համար մեծ նշանակություն ունի հատկապես կենցաղամշակութային այն ֆոնը, որտեղ կատարվում են իրադարձությունները, կերպարներին շրջապատող կենսոլորտը, բնական ու մշակութային միջավայրը: Սովորաբար այն վերարտադրվում է մեծ հավաստիությամբ և դրան նպաստում է այն հանգամանքը, որ տաղանդավոր արվեստագետը ավելի դիտողունակ է, ավելի շատ նրբություններ է նկատում, քան շարքային դիտորդը: [20, էջ 28]

Աղբյուրագիտական գրականության մեջ բազմիցս արժարժվել է գեղարվեստական գրականության՝ որպես պատմական սկզբնաղբյուրի թեման, ինչը ի վերջո բերել է այն համոզման, որ գեղարվեստական գրականությունը մեծ արժեք կարող է ներկայացնել ժամանակաշրջանի մշակույթի, կենցաղի, բարքերի ու սովորույթների, հասարակական մտքի պատմության ուսումնասիրության ժամանակ: Ըստ այդմ՝ ակնհայտ է դառնում, որ ազգագրության համար գեղարվեստական գրականությունը, այլ սկզբնաղբյուրների հետ միասին, դառնում է արժեքավոր և բավական հավաստի սկզբնաղբյուր:

Հայ ազգագրության մեջ գրականության դերը առաջինը կարևորել է անվանի ազգագրագետ Վ. Բդոյանը՝ գրելով. «Հայոց ազգագրական իրողությունները, իբրև գրական նյութ օգտագործվել են շատ գեղարվեստական ստեղծագործություններում: Այդ ձևով մեծ քանակությամբ նյութեր են օգտագործել Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Բաֆֆին և ուրիշներ»: [4, էջ 19] Վերջիններիս աղբյուրագիտական վերլուծությունն իրականացրել են հետազայում Ա. Պետրոսյանը և Ռ. Նահապետյանը, որոնք մի շարք ուշագրավ հոդվածներ են հրատարակել այդ հեղինակների աշխատանքներում առկա ազգագրական նյութի վերաբերյալ: [17; 18; 15]

Հովհ. Թումանյանի գրական ժառանգության մեջ ազգագրական նյութերի ուսումնասիրությամբ զբաղվել են Կ. Մելիք-Փաշայանը, Հ. Հարությունյանը: [13; 12] Մ. Արմենի «Հեղնար աղբյուրը» վեպը՝ որպես Ալեքսանդրապոլի ազգագրության սկզբնաղբյուր, ուսումնասիրվել է մեր կողմից: [1]

Ա. Իսահակյանի ստեղծագործության ազգաբանական վերլուծությունն մինչ օրս չի իրականացվել, ուստի այս հոդվածով փորձել ենք վերլուծել ու արժևորել մեծ վարպետի մի շարք պատմվածքներում և հատկապես «Ուստա Կարո» վեպում առկա այն հարուստ ազգագրական նյութը, որը ներկայացնում է Շիրակի ավանդական կենցաղամշակութային համալիրն իր բազում դրսևորումներով: Ազգագրական նյութը գերազանցապես վերաբերում է գյուղական կենցաղին, որը մանկական ու պատանեկան հիշողությունների հիման վրա, ամենայն մանրամասնությամբ նկարագրել է Վարպետը:

Ազգագրությունը Իսահակյանի պատմվածքներում

Շիրակի ավանդական մշակույթի առանձին երևույթներին Իսահակյանն անդրադարձել է մի քանի պատմվածքներում՝ դրանք ներկայացնելով սեփական հուզական գնահատմամբ: «Հովվերգություն» պատմվածքում, որտեղ նկարագրված են շիրակցիների անասնապահական մշակույթն ու մասնավորապես՝ հովվությունը, հեղինակը մեծ ջերմությամբ է հիշում իր մանկության տարիները: Պատմվածքի հենց առաջին նախադասությունը հաստատում է դրա՝ որպես ազգագրական սկզբնաղբյուրի իսկությունը. «Ավանդաբար կիրառվող մի սովորույթ կար Շիրակում, որ մեր քուրդ հովիվներն արածացնում էին մեր հոտերը մինչև աստվածածնա պասի երկուշաբթին, այսինքն մինչև օգոստոսի սկիզբները:» [7, էջ 28] Այնուհետև նկարագրում է, թե նրանցից հետո ինչպես էին գյուղի տղաները, որոնց թվում և ինքը, ոչխարները հովվում մինչև ուշ աշուն:

«Հայրենի հուշերում», վերհիշելով իրենց տան կյանքը, նա պատմում է իրենց ընտանեկան աշուղի մասին. «Ամեն շաբաթ, կեսօրից հետո, սազը պատյանի մեջ վզից կախ, գալիս էր նա մեր տունը, մնում ամբողջ կիրակի օրը մինչև երկուշաբթի: Եվ երկուշաբթի առավոտ, մեկնում էր սազը վզից կախ, առատ վարձատրված:» [7, էջ 119] Շիրակցիների երաժշտական մշակույթի հետաքրքիր մաս կազմող ընտանեկան աշուղի մասին հիշողություններ է թողել նաև մշակութային և հասարակական գործիչ Կարապետ Կոստանյանը: [10] Իսահակյանի պատմվածքը լրացնում և ամբողջացնում է Շիրակի բնակչության հոգևոր կյանքում այս երաժիշտների գրաված տեղի մասին մեր գիտելիքները:

«Հին գյուղը» պատմվածքում ներկայացված են ծննդաբերության ժամանակ առաջացած բարդությունների դեմ կիրառվող ժողովրդական բժշկության ձևերն ու հատկապես սնահավատական բնույթ կրող անարդյունավետ իռացիոնալ միջոցները: Դառնությամբ նկարագրելով երիտասարդ կնոջ ողբերգական մահը և քննադատելով գյուղում բժշկական ծառայության բացակայությունը՝ նա ցավով փաստում է. «Մեր գեղացիք աղքատ են և մանավանդ չափազանց տգետ, ո՞ւմ խոսք հասկացնես: Էդ բանը կառավարությունը պիտի գլուխ քաշի, բայց էս մեր ռուսի կառավարությունը սատանի պես ամեն լավ բանի հակառակ է. մենք ուզենանք էլ, նա պիտի խանգարի»: [7, էջ 144]

Քաղաքային կենցաղի ու մշակույթի առանձին երևույթներն են նկարագրված «Դարբին Գևորգը» պատմվածքում (դարբնության մեջ առկա սովորույթներ, վարպետենթավարպետ հարաբերություններ և այլն) և «Ղևոնդ աղան» պատմվածքում (Գյումրիվա ավանդական բաղնիք): [7, էջեր 48-56, 166-174]

Ազգագրությունը «Ուստա Կարո» վեպում

«Ուստա Կարո» վեպը Ավետիք Իսահակյանի կյանքի գիրքն է, ինչպես ինքն է ասում՝ «իմ կյանքս ու սերս ու մեծադիր հաճույքս», [8, էջ 632] որի վրա հեղինակն աշխատել է մինչև իր կյանքի վերջը: Վեպի երկու տարբերակ է թողել Իսահակյանը, որոնցից երկրորդը հետմահու հրատարակվել է երկերի վեցհատորյա ժողովածուի չորրորդ հատորում՝ «Գլուխներ «Ուստա Կարո» վեպից» վերնագրով, [7, էջեր 175-486], ապա, որոշ հավելումներով, առանձին գրքով հրատարակվել է 2000 թ.: Վերջին՝ ամբողջական տարբերակը հրատարակվել է 2016 թ., տասնչորսհատորյա Երկերի լիակատար ժողովածուի յոթերորդ հատորում, որի նախաբանում ակադեմիկոս Ս. Սարիսյանը, բնութագրելով աշխատությունը, գրում է. «Իսահակյանը գեղագիտական որոշակի իմաստ է տալիս սյուժեի ազգագրական-բանահյուսական ոճավորմանը: Կյանքն ընթանում է որպես բանահյուսություն՝ կենցաղի, բարքերի, ծիսական արարողությունների ավանդակեցությամբ, և կնունքը, ծնունդը, հարսանեկան կամ աղջկատեսի արարողությունները բացահայտում են ազգային-էթնիկական ծիսակարգի հմայքն ու գեղեցկությունը: ...Իսահակյանը պոետականացնում է ժողովրդի տոհմիկ կենցաղը՝ որպես գոյության հիմք, մնայուն արժեք և փիլիսոփայական կեցություն»: [8, էջ 13]

Ըստ Իսահակյանի մտահղացման՝ «վեպն արտացոլելու էր հայ ժողովրդի քաղաքական-հասարակական կյանքը քսաներորդ դարի սկզբին. ժողովրդի կենցաղը, գեղարվեստական մտածողությունը, փիլիսոփայությունը, հոգեբանությունը...»: [7, էջ 490]

Շիրակի հայերի աշխարհայացքային ու արժեքային համակարգին վերաբերող ժողովրդական փիլիսոփայությանն ու էթնոհոգեբանությանը չենք անդրադառնա, քանի որ դա առանձին ուսումնասիրության նյութ է: Մենք կներկայացնենք շիրակցիների էթնիկ մշակույթի այն բնագավառներն ու երևույթները, դրանց այն կոնկրետ դրսևորումները, որոնց վերաբերյալ ազգագրական նյութերը կա՛մ բացակայում են, կա՛մ շատ թերի են արձանագրված: Հարկ ենք համարում նշել, որ Շիրակի հայերի ազգագրությունն ու բանահյուսությունը ներկայացնող միակ ամբողջական աշխատությունը Աղ. Մխիթարյանցի «Փշրանքներ Շիրակի ամբարներից» երկն է, [14] որտեղ կենցաղի ու մշակույթի ոչ բոլոր ոլորտներն են ընդգրկված:

«Ուստա Կարո» վեպում գեղարվեստորեն վերարտադրված է Կարսի մարզի կամ Արևմտյան Շիրակի մի քանի գյուղերի՝ Բագրանի, Նախճավանի, Թիրսի, Կողբի հայերի ավանդական մշակույթը, մասնավորապես՝ զբաղմունքները, հագուստը, ուտեստը, բնակարանի կառուցվածքն ու դրա ներքին հարդարումը, ընտանեկան կենցաղն ու ծիսակարգը, ընտանեկան ու համայնական փոխհարաբերությունները, տղամարդկանց խնջույքներն ու դրանց արարողակարգը, կենացները և այլն: Շատ հետաքրքիր է ներկայացված քաղաքացի/գյումրեցի-գյուղացի հակամարտությունը, որը կարևոր է հատկապես այն առումով, որ ավելի շատ պատմություններ կան գյումրեցիների կողմից գյուղացիներին ծաղրի ենթարկելու և խաբելու մասին, իսկ հակառակը՝ ոչ: Այս առումով վեպի հիշյալ դրվագը կարելի է համարել եզակի և ուշագրավ դեպք:

Վերոհիշյալ ու ազգագրության համար արժեքավոր այլ իրողությունների շարքում, սակայն, ուզում ենք կանգ առնել Շիրակի բնակչության առաջնային արտադրության մաս կազմող գյուղական արհեստների ու ավանդական տոնաշարից Սբ Գևորգի տոնի վերլուծության վրա, որոնք ամենայն մանրամասնությամբ նկարագրված են վեպի առաջին «Գլուխներ «Ուստա Կարո» վեպից» հրատարակության մեջ:

Գյուղական արհեստներն ու արհեստավորները

Արհեստների մասին խոսելիս հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Շիրակի վարչական կենտրոն Ալեքսանդրապոլ քաղաքը, որը տարածաշրջանի կարևոր առևտրա-արհեստավորական կենտրոնն էր, որոշակի ազդեցություն է ունեցել նաև գյուղական բնակչության վրա: Քանի որ այն հայտնի էր իր հարուստ արհեստավորական ավանդույթներով, ուստի թե՛ մասնագիտական գրականության մեջ, թե՛ ազգագրական տարբեր նյութերում ու աղբյուրներում նկարագրված են հենց քաղաքային արհեստները: Մինչդեռ քաղաքային ու գյուղական արհեստները հստակ տարանջատվում են՝ դրսևորելով մի շարք առանձնահատկություններ:

Ուստա Կարոն գյուղական արհեստավորի տիպական կերպար է, որի բնութագիրը դեռ 19-րդ դարի վերջին տվել է Ս. Թառայանցն իր «Հայ ժողովրդի արհեստագործությունը» աշխատության մեջ, ուր փորձել է դասակարգել, խմբավորել, բնութագրել գյուղական ու քաղաքային արհեստները, բացահայտել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: [6]

Ուստա Կարոն համապատասխանում է հեղինակի կողմից առանձնացված «Շարժական վարձկան արհեստավոր» տիպին, «որը շրջում է ընտանիքից-ընտանիք և իրաքանչիւրի համար կարճ ժամանակամիջոցում կատարում է պահանջուած գործը: Ընտանիքը տալիս է նրան հում նիւթեր և հարկաւոր միջոցները (օրինակ՝ փայտ, ածուխ), և ընտանիքի աչքի առաջ նա կատարում էր իր գործը: Եւ որովհետս այդ գործը գլխաւորապէս գյուղերումն է տարածուած, ուր ապրուստի անհրաժեշտ պիտոյքները (հացը, պանիրը, գինին...) առատ են, ուստի սովորաբար մի ընտանիքի մէջ գործ կատարող արհեստաւորը ստանում է իր ուտելիքը և խմելիքը: Գործը վերջացնելով, ստանում է իր վարձը, որ շատ անգամ բաղկացած է զանազան նիւթերից (ուրեմն ոչ փող) և հեռանում է՝ մի ուրիշ ընտանիքում գործ գտնելու:» [6, էջ 40]

Ուստա Կարոն այն քիչ արհեստավորներից էր, որը տիրապետում էր մի քանի արհեստի, ինչպես Իսահակյանն է գրում՝ նա «հազարարհեստ մարդ» էր, որ «հիմնավորապես սովորեց որմնադրության բոլոր արհեստը – քար տաշել, քանդակ անել, պատ շարել, կամար կապել, և դարձավ վարպետ»: [7, էջ 209] Պետք է նշել, որ ընդհանրապես մի քանի արհեստի հմտությունների տիրապետումը բնութագրական է գյուղական վարպետների համար, չնայած քաղաքային արհեստավորների մեջ ևս հանդիպում են մի քանի արհեստների մեջ հմուտներ: [19, էջ 194]

Ուստա Կարոն՝ որպես հավաքական կերպար, ներկայացնում է նաև բնակչության մեջ արհեստավորի նկատմամբ ընդգծված հարգարժան վերաբերմունքը, նրա բարձր սոցիալական դերն ու նշանակությունը գյուղական համայնքի կյանքում, ինչն առաջին հերթին արտահայտվում է շատերի քավորը /կնքահայրը/ լինելու իրողության մեջ, որը հայոց ավանդական ընտանեկան կենցաղում կարևորագույն դերակատարում ուներ: [16]

Արհեստավորի համար բնութագրական մյուս հատկանիշը, որը տեսնում ենք հերոսի կերպարում, ինքնահավանությունը կամ մեծախոսությունն է: «Ինձ նման օթևան չի նող, օջախ կապող, կարմունջ քցող, աղբյուր հանող վարպետ արևելքից-արևմուտք չի գտնվի», - իրավունքով այսպես վկայում էր իր մասին Ուստան...»: [7, էջեր 227-228]

Իսահակյանի խորաթափանց աչքից չի վրիպել արհեստավորական մեկ այլ ավանդույթ՝ վարպետների ժամանցի հիմնական ձևերից ամենասիրվածը՝ ուտել-խմելը կամ խնջույքների մասնակցությունը: Եթե քաղաքային արհեստավորների հավաքների հիմնական վայրը համքարական ակումբ-սրճարաններն էին, իսկ ընկերակիցները՝ իրենց նման վարպետները, [2, էջ 81] ապա գյուղում դրանք կազմում էին գյուղական հասարակության տարբեր խավերը: Կարևորելով այս սովորույթը՝ որպես արհեստավորին բնորոշող հատկանիշ, Իսահակյանը Ուստա Կարոյի կերպարը ներկայացնում է ինչպես առօրյա կերուխումի, այնպես էլ տարբեր առիթներով կազմակերպված խնջույքների միջավայրում:

Վերջինը, ինչով ուզում ենք ավարտել այս հարցին վերաբերող դիտարկումները, վերաբերում է արհեստներին ուղեկցող ծեսերին, որոնց ևս անդրադարձել է վեպի հեղինակը: Ընդհանրապես, բոլոր արհեստավորները, յուրաքանչյուր նոր գործ սկսելուց առաջ հաջողություն ապահովող ծիսական արարողություն էին կատարում, որն ուղեկցվում էր որոշակի խոսքային բանաձևով կամ աղոթքով: [5, էջ 104] Բնական է, որ Ուստա Կարոն չէր կարող չպահպանել այդ ավանդույթը, որի նկարագրությունը տեսնում ենք վեպի «Բուլիկենց ամբարը և Ղանդահարի բազարը» գլխում: Այսպես. ամբարի հիմնաքարերը դնելուց առաջ «Ուստան երեսը խաչակնքեց, Տեփանոսը ցորենի հատիկները շաղ տվեց խրամատի մեջ, սրտում լուռ աղոթելով: Ապա Ուստայի հետ դրին հիմքի անկյունաքարերը: Ամեն կողմից ծայր տվին բարեմաղթանքները.- Տեփանոս ջան, բարով-խերով ամբար էղնի, արդար սրտով վայելես...- Ամբարդ լիքն էղնի, աստված քեզի տա, դու էլ՝ ուրիշին:» [7, էջ 233] Նման բարեմաղթությունները շարունակվում էին նաև աշխատանքի սկզբին ու ավարտին կազմակերպվող հացկերույթների ընթացքում՝ կենացների ձևով:

Սուրբ Գևորգի տոնն ու ուխտագնացությունը

Այժմ համառոտ անդրադառնանք Սբ Գևորգի տոնակատարությանն ու դրա շրջանակում կատարվող ուխտագնացությանը, որը ամենավաղ գույներով ու շատ մանրամասն նկարագրել է Իսահակյանը: Թե՛ տոներին, թե՛ ուխտագնացությանը հայ ազգագրության մեջ բազմիցս անդրադարձել են: Հայոց ավանդական տոնացույցը թերևս ամենաշատ քննարկվող ու ժողովրդին առավել ծանոթ ազգագրական երևույթն է, որի վերաբերյալ բազում գրքեր ու ուսումնասիրություններ կան: Դրանցում ներկայացված է նաև Սբ Գևորգի տոնն ու այդ սրբին նվիրված ուխտագնացությունը, որտեղ, սակայն, Շիրակյան տոնակատարության մասին ոչինչ չկա: Այդ մասին չի խոսում նաև Ալ. Մխիթայանցը: Հ. Խառատյանի աշխատության մեջ թեև հիշատակվում է, որ այս տոնը Շիրակում իրականացվել է, բայց թե ինչպես՝ չի նկարագրվում: Ըստ հեղինակի՝ «Սբ Գևորգի տոնը կատարվել է սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ն ընկնող շաբաթ օրը և նախորդել է Վարագա խաչի տոնին, [...]բայց ժողովուրդը ուխտագնացությունը կատարում էր հոկտեմբերի վերջին, երբ դաշտային երկրագործական աշխատանքներն ավարտված էին լինում»: [9, էջ 243] Իսահակյանը գրում է, որ տոնը կատարվել է սեպտեմբերի վերջին: Այս հարցը պարզաբանելու մեր պրպտումների արդյունքում պարզվեց, որ Կարսում Սբ Գևորգի տոնն ու ուխտագնացությունը տեղի էին ունենում սեպտեմբերին և կատարվում էին հետևյալ կերպ. «Ուխտագնացությունը դեպի Սուրբ Գևորգ տեղի էր ունենում աշնանը՝ «Սուրբ Խեչին», մոտավորապես սեպտեմբերի 5-15: Այնտեղ էին հավաքվում բազմահազար հայեր Արևելյան և Արևմտյան Հայաստանից: Վաղ առավոտյան, գեղեցիկ եզները լծած սայլերին, փռշնիկները, զանգուլակները և բոժոժները վզներին կախած՝ շարժվում էին դեպի Նախիջևան և ապա՝ Բագարան՝ Սուրբ Գևորգի գերեզմանը համբուրելու: Ախուրյան գետի ձորաբերանի բարձունքի վրա կառուցված է Գևորգ Մարգարետունու վանքը, որի (դեպի Անի) պատի տակ թաղված է Սուրբ Գևորգը: Վանքի շուրջը՝ մոտ 10 հեկտար տարածության վրա, վառվում էին կրակները, և եփվում էր մատաղը: Ամենուրեք նվագ, երգ ու պար, զվարճություն էր, մանավանդ նորահարս ունեցողների մոտ: Աչքի էին ընկնում գյումրեցիները՝ իրենց նվագով, պարով ու քեֆով, զուգված ու զարդարված ֆայտոններով»: [10, էջ 591] Մա կարելի է համարել «Ուստա Կարո» վեպի «Բագրանի ուխտը» գլխի կրճատ տարբերակը, ինչը վկայում է դրա բացարձակ արժանահավատությունը՝ որպես ազգագրական սկզբնաղբյուրի:

Իսահակյանն, անշուշտ, ավելի ամբողջական է պատկերում տոնակատարությունը՝ պայծառ գույներով ու ազգագրական ճշգրիտ մանրամասներով նկարագրելով դրա առանձին դրվագները, մասնավորապես՝ ժողովրդական խաղերը (ըմբշամարտ), ներկայացումները (լարախաղաց), երգերը (սիրերգ, կատակերգ), պարերն իրենց տեսակներով ու անուններով, բանահյուսության նմուշներով, տոնավաճառը, հացկերույթն ու մատաղը և այլն: Հայտնի է, որ ուխտագնացությունը՝ որպես ժողովրդական քրիստոնեության դրսևորման ձև, իրականացվել է անհատական, ընտանեկան, ազգակցական-դրացիական մեծ խմբերով: [3] Վեպում հստակ ներկայացված են ոչ միայն սրանք, այլև դրանցում առանձնացված սեռատարիքային խմբերն իրենց հատուկ վարքուբարքով, հետաքրքրություններով ու մասնակցության ձևերով:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ավ. Իսահակյանի արձակի աղբյուրագիտական նույնիսկ համառոտ վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կարելի է համարել խիստ հավաստի ու արժեքավոր սկզբնաղբյուր Շիրակի ազգագրության ուսումնասիրության համար: Հատկապես «Ուստա Կարո» վեպը ազգագրական-բանահյուսական նյութերի մի ողջ գանձարան է, որտեղ հանգամանորեն ներկայացված է Արևմտյան Շիրակի բնակչության կենցաղամշակութային համալիրն իր բոլոր՝ առաջնային արտադրության, կենսապահովման, սոցիոնորմատիվ ու հումանիտար մշակույթներով: Իսկ Իսահակյանի հետրոսներն ամբողջացնում են ավանդական շիրակցու և գյումրեցու էթնիկ նկարագիրը:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Բազեյան Կ. *Ալեքսանդրասյուրի քաղաքային կենցաղը Մ. Արմենի «Հեղնար աղբյուրը» վիպակում // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»*: Գյումրի: Հ 8: 2005: 60-65 էջեր:
2. Բազեյան Կ., Աղանյան Գ. *Ալեքսանդրասյուր. Ազգագրական էսքիզներ // «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշար-2, «Գիտություն» հրատ., 2000: Գյումրի:*
3. Բազեյան Կ., Աղանյան Գ. *Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները գյումրեցիների տոնածիսական կյանքում // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»*: Գյումրի: Հ 14: 2012: 80-86 էջեր:
4. Բոդյան Վ. *Հայ ազգագրություն. Համառոտ ուղևագիծ*, Երևան: ԵՀ հրատ.: 1974: 287 էջ:
5. Թադևոսյան Ա. *Արհեստներ և տնայնագործություն // Ոչ նյութական մշակութային ժառանգություն. Դասակարգումն ու չափորոշիչները*: Երևան: «Եզեա» հրատ.: 2009: 100-113 էջեր:
6. Թառայեան Ս. *Հայ ժողովրդի արհեստագործությունը // «Ազգագրական հանդես»*: Գիրք Գ: N 1: Թիֆլիս: 1898: 3-71 էջեր:
7. Իսահակյան Ավ. *Երկերի լիակատար ժողովածու*: Հատոր չորրորդ: Երևան: 1975:
8. Իսահակյան Ավ. *Երկերի լիակատար ժողովածու*: Հատոր յոթերորդ: Երևան: 2016:
9. Խառատյան-Առաքելյան Հ. *Հայ ժողովրդական տոները*: Երևան: «Չանգակ-97» հրատ.: 2005: 355 էջ:
10. Կարս: *Հայոց բանահյուսական մշակույթը*: Երևան: «Գիտություն» հրատ.: 2013: 749 էջ:
11. Հարոյան Մ. *Ալեքսանդրասյուրի երաժշտական ավանդույթները Կ. Կոստանյանի «Բնչ երգեր էինք լսում մեր մանկության օրերում» հուշագրությունում: // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր // Գյումրի: 2007: 219-225 էջեր:*
12. Հարությունյան Հ. *Հայ ժողովրդական հավատալիքները Հովհ. Թումանյանի գրական ժառանգության մեջ // «Պատմաբանասիրական հանդես»*: 2015: N 3: 108-124 էջեր:
13. Մելիք-Փաշայան Կ. *Թումանյանը և ազգագրությունը // «Պատմա-բանասիրական հանդես»*: 1969: N 3: 77-84 էջեր:
14. Մխիթարեանց Աղ. *Փշրանք Շիրակի ամբարներից*: Էմինեան ազգագրական ժողովածու: Հատոր Ա: Մոսկուա-Ալեքսանդրապոլ: 1901: 338 էջ:
15. Նահապետյան Ռ. *Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի արտացոլումը Իս. Աբովյանի երկերում // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»*: Հ. 8: Գյումրի: 2005: 53-59 էջեր:
16. Նահապետյան Ռ. *Քալորը հայոց մեջ (ըստ աղձնիքահայերի ազգագրական տվյալների) // «Պատմա-բանասիրական հանդես»*, 2007: N1: 123-137 էջեր:

17. Պետրոսյան Ա. Ազգագրական նյութերը Բաֆֆու «Կայծեր» վեպում // «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես: 2014: 452-466 էջեր:
18. Պետրոսյան Ա. Ժողովրդագիտական տվյալների արտացոլումը Պերն Պոռչյանի երկերում // «Պատմա-բանասիրական հանդես»: 2009: N1: 88-102 էջեր:
19. Սեդրոսյան Կ. Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում // «Հայ ազգագրություն և բանասիրություն» սրակ 6: Երևան: 1974: 159-252 էջեր:
20. Филиппова Е. Художественная литература как источник для этнографического изучения города // "Советская этнография". 1986. N 3-4. 26-36 сс..

References

1. Bazeyan K., The Urban Daylife in the Novel of M. [Aleksandrapoli kaghakayin kentsaghy M. Armeni «Heghnar aghbyury» vipakum] // «Scientific works» of SCAS NAS RA, Gyumri, 2005. v. 8, 60-64 pp. (in Armenian)
2. Bazeyan K., Aghanyan G., Alexandropol. Ethnographical sketches [Aleksandrapol. Azgagrakan eskizner] "Archaeological and Historico-Ethnographical Studies in Shirak". v. 2. Gyumri. «Gitutyun» publishing. 2014. 114 p. (in Armenian)
3. Bazeyan K., Aghanyan G. The manifestations of popular Christianity in the holi-ritual mode of life of Gyumri dwellers [Zhoghovrdakan kristoneutyany drsevorummery gyumretsineri tonatsisakan kyankum] «Scientifik works» of SCAS NAS RA, Gyumri, 2014. v. 14, 80-86 pp. (in Armenian)
4. Bdoyan V. Armenian ethnography. Brief outline. [Hay azgagrutyun. Hamarrot urvagits], Yerevan, 1974, YU publishing, 287 p. (in Armenian)
5. Tadevosyan A. Crafts and homemaking [Arhestner yev tnaynagortsutyun], // "Intangible cultural heritage. Classification and standards", Yerevan. «Egea» publishing. 2009, 100-113 pp.. (in Armenian)
6. Tarayan S. Craftsmanship of the Armenian people [Hay zhoghovrdi arhestagortsutiuny] // Ethnographic exhibition. Book C, No. 1, Tiflis, 1898, 3-71 pp.. (in Armenian)
7. Isahakyan Av. Complete collection of works [Yerkeri liakatar zhoghovatsu] v. 4, Yerevan, "Hayastan" publishing, 1975. (in Armenian)
8. Isahakyan Av. Complete collection of works [Yerkeri liakatar zhoghovatsu] v. 7, Yerevan, "Gitutyun" publishing, 2016. (in Armenian)
9. Kharatyan-Arakelyan H. Armenian folk holidays [Hay zhoghovrdakan tonery]. Yerevan. "Zangak-97" publishing, 2005, 335 p. (in Armenian).
10. Kars. Armenian folklore culture. [Kars: Hayots banahyusakan mshakuyty]. Yerevan. "Gitutyun" publishing. 2013. 749 p.
11. Haroyan M. Musical traditions of Alexandropol in the memories of K Kostanyan "What songs did we listen to in childhood [Aleksandrapoli yerazhshtakan avanduytnery K. Kostanyani «Inch yerger eink lsum mer mankutyany orerum» hushagrutyunum] Materials of the seventh republican scientific session «Historical and cultural heritage of Shirak». Gyumri. 2007. 219-225 pp. (in Armenian)
12. Harutyunyan H. Armenian folk beliefs in the literary heritage of Ov. Tumanyan [Hay zhoghovrdakan havataliknery Hovh. Tumanyani grakan zharrangutyany mej] Historical and philological journal 2015, v. 3, 108-124 pp.. (in Armenian)
13. Melik - Pashayan K. Tumanyan and ethnography [Tumanyany yev azgagrutyuny] // "Historical and philological journal". 1969, v.3, 77-84 pp.. (in Armenian)

14. Mkhitarants A. Crumbs from the barns of Shirak [*Pshrank Shiraki ambarnerits*] Emin ethnographic collection, v. 1, Moscow-Alexandropol 1901, 338 p. (in Armenian)
15. Nahapetyan R. [*Hayots yntaneamusnakan sovoruytneri u tseseri artatsvolumy KH. Abovyani yerkerum*] The reflection of Armenian family customs and rituals in Kh. Abovyan's works // "Scientific works" of SCAS NAS RA, Gyumri, 2005. v. 8, 53-59 pp. (in Armenian)
16. Nahapetyan R. Godfather in the Armenian (according to the ethnographic data of the Armenians of Aghdzk) [*Kavory hayots mej (yst aghdznikahayeri azgagrakan tvyalneri)*] // "Historical and philological journal". 2007, v.1. 123-137 pp.. (in Armenian)
17. Petrosyan A. Ethnographic materials in Ruffii's novel "Kaytser" [*Azgagrakan nyutery Raffu «Kaytser» vepum*] // "History and culture". Jurnal of Armenian studies, Yerevan, 2014, 52-466 pp. 4. (in Armenian)
18. Petrosyan A. The reflection of folk data in P. Proshyan's works // "Historical and philological journal"//[*Zhoghovrdagitakan tvyalneri artatsolumy Perch Prroshyani yerkerum*] Historical and philological journal 2009, v.1, 88-102 pp.. (in Armenian)
19. Seghbosyan K. Artisanal traditions and their expressions in the life of the people of Leninakan// [*Arhestavorakan avanduytneri yev drants artahaytutyunnery Leninakantsineri kentsaghum*] // "Armenian ethnography and folklore", v. 6, Yerevan, publishing AN Arm.SSR, 1974, 159-252 pp.. (in Armenian)
20. Philippova E. Fiction as a source for the ethnographic study of the city [*Khudozhestvennaya literatura kak istochnik dlya etnograficheskogo izucheniya goroda*] // "Soviet ethnography", 1986, v. 3-4, 26-36 pp.. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: 26.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 15.04.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for pub.: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե Ռազմիկի ԲԱԶԵՅԱՆ, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ bazeyan60@yandex.ru, <https://orcid.org/0000-0002-5202-4835>

Karine Razmik BAZEYAN: PhD in History, Associate professor, Senior Researcher at Shirak Center
for Armenological Studies of the National Academy of Sciences, Yerevan, RA,
e- mail: bazeyan60@yandex.ru, <https://orcid.org/0000-0002-5202-4835>

Карине Размиковна БАЗЕЯН: кандидат истор. наук, доцент, старший научный
сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН, Ереван, РА,
эл. адрес: bazeyan60@yandex.ru, <https://orcid.org/0000-0002-5202-4835>